



«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ

**«ԴԱՏԱԿԱՆ ՎԵԹԻՆԳԸ՝ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄ»**

**Հուլիս, 2019
Երևան**

Բովանդակություն

I.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ	3
II.	ՎԵԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ	5
1.	Ապահովել նվազագույն պայմաններ	5
2.	Խուսափել ոչ ցանկալի հետևանքներից	5
III.	ՎԵԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐ	6
□	Հասարակության իրազեկում և հաղորդակցում	6
□	Վեթինգային առաջնահերթությունների սահմանում և մոդելի ընտրություն	6
□	Վեթինգային չափորոշիչների և ակնկալվող արդյունքների սահմանում	6
	Վեթինգային մեխանիզմի ձևավորում	7
□	Միջազգային ընթացակարգային չափորոշիչների պահպանում.	7
IV.	ՎԵԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ	9
1.	Անհատական բարեխղճություն.	9
2.	Անձնական կարողություններ.	9
3.	Ներկայացվածություն.	9
4.	Ընթացակարգային չափորոշիչներ	9
V.	ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ	10
1.	ԱԼԲԱՆԻԱ	10
2.	ԲՈՍՆԻԱ ԵՎ ՀԵՐՅԵԳՈՎԻՆԱ	20
3.	ՀՈՒՆԳԱՐԻԱ	25
4.	ԿՈՍՈՎՈ	26
5.	ՍԵՐԲԻԱ	26
6.	ԽՈՐՎԱԹԻԱ	26
VI.	ԴԱՏԱԿԱՆ ՎԵԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	28

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ռազմական հակամարտությունից կամ բռնապետական ռեժիմի տապալումից հետո պետական մարմինները և դատական իշխանությունը որպես կանոն գտնվում են ճգնաժամային, իսկ երկրների ինստիտուցիոնալ համակարգը՝ կաթվածահար վիճակում: Հաճախակի են դեպքերը, երբ պետական մարմինները շարունակում են իրենց գործունեությունն իրականացնել այնպիսի կառուցվածքով, ինչպիսին իրականացվել է նախքան իշխանափոխությունը: Արդյունքում, իշխանափոխություններից հետո էլ պետական մարմինները շարունակում են սպասարկել նախկին իշխանությունների շահերը, և հանրային վստահությունը նմանատիպ մարմինների հանդեպ գտնվում է շատ ցածր մակարդակում: Հարկ է հիշել, որ վրեժխնդրությունն անցումային արդարադատության նպատակ չէ:

Անցումային արդարադատություն կիրառվում է հետևյալ երկու դեպքերում՝ հետ-հակամարտային իրավիճակներ և անցումը մի քաղաքական համակարգից մյուսին, որն ունի իր տարատեսակները: Այն կիրառվել է խորհրդային կարգերից անցման ժամանակ հետխորհրդային երկրներում, ապարտեիդի ռեժիմի տապալման դեպքում Աֆրիկայում, բռնապետության հաղթահարման դեպքում, որի վերջին և ցայտուն օրինակն է Գամբիան, հակակոռուպցիոն և կազմակերպված հանցագործության դեմ պայքարի շրջանակներում, նույնիսկ հեղափոխության բացակայության պարագայում, ինչպիսին եղել է Ալբանիայում, ինչպես նաև դատական համակարգի քաղաքականացման դեմ պայքարը, որպիսին եղել է Քենյայում:

Ուստի, անցումային արդարադատություն մեխանիզմներ կիրառելիս համակարգային բարեփոխումների իրականացումն առանցքային նշանակություն ունի: Համակարգային բարեփոխումներն իրականացվում են, որպեսզի ստեղծվեն երաշխիքներ՝ նախկինում կատարված հանցագործություններն այլևս չկրկնվելու համար: Համակարգային բարեփոխումներ ասելիս հիմնականում նկատի ունենք լյուստրացիան (մաքրագործում) և վեթինգը (քաղաքական գործիչների գտում): Համակարգային բարեփոխումներին զուգահեռ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և առանձին անհատների գործադրած ջանքերը նույնպես մեծ կարևորություն ունեն արդյունավետ անցումային արդարադատության իրականացման ժամանակ:

Վեթինգը (պետական և քաղաքական գործիչների գտում) գործընթաց է, որի ընթացքում իրականացվում են հետաքննություններ են՝ պարզելու, թե արդյո՞ք պետական պաշտոններ զբաղեցնող անձինք, ովքեր մեղադրվում են մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիայի և այլ հանցագործությունների մեջ, իրենց գործունեությունն իրականացնելիս չարաշահել են իրենց պաշտոնական դիրքը, թե՞ ոչ:

Վեթինգը կարող է կիրառվել ոչ միայն որպես անցումային արդարադատության գործիք, այլև՝ ինստիտուցիոնալ բարեփոխումների գործիք կամ աշխատանքի ընդունման, պաշտոնի նշանակման կամ առաջխաղացման կանոնավոր մեխանիզմ՝ զգայուն ոլորտների և պաշտոնների դեպքում:

Վեթինգի թիրախում կարող են լինել հանրային/պետական կառույցներում, այդ թվում՝ ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայություններում, բանակում, քրեակատարողական հիմնարկներում, դատախարակական համակարգում, հանրային և քաղաքացիական ծառայությունում, քաղաքական պաշտոններում, դիվանագիտական համակարգում և ֆինանսական հաստատություններում պաշտոն զբաղեցնող կամ ծառայող անձինք:¹

Վեթինգը զուտ իրավական կատեգորիա չէ: Վեթինգը կարող է դիտարկվել որպես վեթինգի և անցումային արդարադատության միջանկյալ տարբերակ, և կարող է ներառել ինչպես իրավական, այնպես էլ՝ կիսա-իրավական և ոչ իրավական մեխանիզմներ:

Վեթինգը կարող է իրականացվել հետևյալ եղանակներով. ապակենտրոնացված, երբ յուրաքանչյուր պետական մարմնում ստեղծվում է իր վեթինգային մեխանիզմը, **կենտրոնացված,** երբ ստեղծվում է միջգերատեսչական հանձնաժողով, որում ներառվում են անդամներ տարբեր պետական մարմիններից, այդ թվում՝ ուժային կառույցներից կամ նոր անկախ մարմնի ստեղծմամբ, որը համարվում է ամենաարդյունավետ, սակայն միևնույն ժամանակ ամենաթանկ մոդելը:

¹ Արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.ictj.org/sites/default/files/ICTJ_Book_JusticeMosaics_2017.pdf, էջեր 14-15:

II. ՎԵԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

1. Ապահովել նվազագույն պայմաններ

- **Քաղաքական պայմաններ.** տվյալ կառավարության կողմից վեթինգ իրականացնելու իշխանության և քաղաքական կամքի առկայություն:
- **Ինստիտուցիոնալ պայմաններ.** այն հանրային/պետական պաշտոնների շրջանակի սահմանում, որոնք ենթարկվելու են վեթինգի:
- **Անձնական պայմաններ.** այն անձանց շրջանակի սահմանում, որոնք ենթարկվելու են վեթինգի: Վեթինգի ենթարկվող անձանց ճշգրիտ ցանկերն անհրաժեշտ է հրապարակել:
- **Իրավական պայմաններ.** վեթինգի իրականացման համար համապատասխան օրենսդրական շրջանակի սահմանում:
- **Օպերատիվ պայմաններ.** վեթինգի իրականացման համար ֆինանսական ռեսուրսների հատկացում:
- **Ժամանակային պայմաններ.** վեթինգի իրականացման համար ժամանակաշրջանի սահմանում:

2. Խուսափել ոչ ցանկալի հետևանքներից

- **Քաղաքական չարաշահումներ** (երբ վեթինգի ենթարկվող անձանց շրջանակում թիրախավորվում են քաղաքական հակառակորդները, ուստի արգելվում է վեթինգի ենթարկել անձանց՝ կապված քաղաքական և կուսակցական դիրքորոշումներ արտահայտելու հետ),
- **Կառավարման համակարգի** պարալիզացում (երբ բոլոր հանրային ծառայողները ենթարկվում են վեթինգի միաժամանակ՝ առանց փուլային անցման և փոխարինումների),
- **Ապակայունացում** (երբ վեթինգի ենթարկվող անձինք չեն ինտեգրվում հասարակությունում, դառնում են հանցագործ՝ ձևավորելով կազմակերպված հանցավոր խմբեր կամ զինված ընդդիմություն և անվտանգության համար սպառնալիք հանդիսանում):²

² “Vetting Public Employees in Post-conflict Settings”, United Nations Development Programme Bureau for Crisis Prevention and Recovery, pages 11-14, available at: <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global->

III. ՎԵԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐ

- **Հասարակության իրազեկում և հաղորդակցում**

Հասարակությանն անհրաժեշտ է իրազեկել վեթինգ նախաձեռնելու գործընթացը սկսելու առաջին իսկ օրերից և իրականացնել հանրային հաղորդակցությունը մինչև գործընթացի ավարտը՝ ապահովելով մեդիայի և քաղաքացիական հասարակության մասնակցությունը նշյալ գործընթացին: Ներքին ընթացակարգերի ընդունումը հնարավորություն կընձեռնի վեթինգ իրականացնող մարմնին տեղեկություններ հավաքագրել քաղաքացիական հասարակությունից: Հատուկ ուշադրության են արժանի տուժողները և նրանց ընտանիքները:

- **Վեթինգային առաջնահերթությունների սահմանում և մոդելի ընտրություն**

Այստեղ հատուկ ուշադրության են արժանի այն պետական մարմինները և/կամ դրանց ստորաբաժանումները, որոնց գործունեության վերաբերյալ առավել մեծ թվով բողոքներ են ստացվել: Բացի այդ, անհրաժեշտ է հասկանալ, արդյո՞ք վեթինգը տարածվելու է տվյալ պետական մարմիններում կամ ստորաբաժանումներում աշխատող բոլոր աշխատողների, թե՛ միայն որոշակի խմբի վրա: Ընդ որում, պետք է նշել, որ վեթինգի կարող են ենթարկվել ոչ միայն պաշտոնավորող պաշտոնյաները, այլև՝ նոր նշանակում ստացած պաշտոնյաները, ներառյալ՝ նրանք, ովքեր ունեն առաջխաղացումներ կամ վերանշանակվել են մի պաշտոնից մյուսին: Միաժամանակ պետք է նշել, որ այս «փափուկ» վեթինգային տարբերակը չի ապահովում լուրջ իրավախախտումներ իրականացրած անձանց հեռացումը համակարգից: Վեթինգի ենթարկվող անձանց ճշգրիտ ցանկերն անհրաժեշտ է հրապարակել:

- **Վեթինգային չափորոշիչների և ակնկալվող արդյունքների սահմանում**

Վեթինգային չափորոշիչները առավել մանրամասն նկարագրված են ստորև, սակայն որպես կանոն, դրանք բաժանվում են բովանդակային և ընթացակարգային չափորոշիչների: Ըստ այդմ, բովանդակային ընդհանուր չափորոշիչները ներառում են.

- **Դատավորների և նրանց հետ փոխկապակցված անձանց ակտիվների ստուգումը՝** հայտարարագրման համակարգի և փաստացի տիրապետվող ողջ ակտիվների և դրանց ծագման աղբյուրների համեմատության միջոցով,
- **Համապատասխանության հարցի պարզումը՝ մասնագիտական կարողությունների/հմտությունների ստուգումը** (proficiency assessment), **թե արդյո՞ք դատավորը համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնին:**

- **Կասկածելի կապերի ստուգումը**, որի վերջնական պատասխան է համոզվել, որ դատավորը կապված չէ կազմակերպված հանցավոր խմբերի հետ:

Այստեղ հարկ է նշել, որ յուրաքանչյուր կարգ զբաղեցնող պաշտոնի համար հնարավոր է սահմանել տարբեր չափորոշիչներ, և որքան բարձր է պաշտոնը, այնքան՝ խիստ են չափորոշիչները:

Վեթինգային մեխանիզմի ձևավորում

Անհրաժեշտ է հասկանալ, թե վեթինգ իրականացնող մարմինը կունենա վարչական, քվադրատական, թե՛ դատական բնույթ: Ըստ միջազգային փորձի՝ **դատական վեթինգի իրականացման գործընթացն իրականացնում է հետևյալ մարմինների կողմից.**

- **Խորհրդարանի կողմից կազմված ժամանակավոր հանձնաժողով**, որը զբաղվում է Անկախ վեթինգային հանձնաժողովի, Բողոքարկման խորհրդի և Հանրային հանձնակատարի գործունեության կազմակերպման և անդամների ընտրության գործընթացով,
- **Անկախ վեթինգային հանձնաժողով**,
- **Բողոքարկման խորհուրդ**՝ դատական համակարգի մաս, որը քննում է Անկախ վեթինգային հանձնաժողովի որոշումների դեմ ներկայացված բողոքները,
- **Հանրային հանձնակատար**, որը զբաղվում է վեթինգային գործունեության նկատմամբ վերահսկողությամբ:

Բացի այդ, անհրաժեշտ է վերը նշված առաջին հանձնաժողովի կազմավորման ժամանակ ապահովել է **իշխող և ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությունը**, սակայն՝ թվի ոչ հավասար հարաբերակցությամբ, ինչպես նաև **Մոնիթորինգի միջազգային մարմնի ներկայացուցիչներ:**

Այս գործընթացում հարկ է սահմանել **վեթինգ իրականացնող մարմնի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության երաշխիքներ**, այդ թվում՝ հանրությանը և Ազգային ժողովին կանոնավոր կերպով հաշվետվության ներկայացման պահանջ:

Կարևոր է ապահովել **վեթինգ իրականացնող մարմնի անկախությունը**, այդ նպատակով սահմանել վերջինիս աշխատողների **աշխատանքի ընդունման մրցութային կարգ և չափորոշիչներ**, այդ թվում ներառելով՝ բարձր մասնագիտական պատրաստվածությունը, անաչառությունը և բարեխղճությունը ստուգելու չափորոշիչներ,

- **Միջազգային ընթացակարգային չափորոշիչների պահպանում.**

Կարևորվում է, որ վեթինգի ենթակա անձանց վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ հավաքագրման ենթարկվի, պահպանվեն օրենսդրական ընթացակարգերը և վեթինգի

իրականացումը սիներգիայի մեջ գտնվի անցումային արդարադատության, դատաիրավական, հակակոռուպցիոն և այլ համակարգային բարեփոխումների հետ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի՝

- **վեթինգի ենթարկվող անձանց** իրենց նկատմամբ իրականացվող գործընթացների մասին տեղեկություն տրամադրելու և առկա կասկածներին և/կամ **մեղադրանքներին դիրքորոշում ներկայացնելու հնարավորության նախատեսումը,**
- **ապացուցման ստանդարտի սահմանումը.** վերանայման այս գործընթացին առավել համապատասխանում է «Հավանականությունների հավասարակշռության» (balance of probabilities) ստանդարտը, որի համաձայն՝ վեճը լուծվում է այն կողմի օգտին, որի պահանջների իրավաչափությունն ու ճշմարտացիությունն առավել հավանական է: Ապացուցման բեռը հիմնականում դրված է վեթինգն իրականացնող մարմնի վրա, սակայն որոշ բացառիկ դեպքերում, ապացուցման բեռը կարող է դրվել վեթինգի ենթարկվող անձի վրա: Հիշյալ բացառիկ դեպքերն են.
 - վեթինգի ենթարկվող անձը վեթինգ իրականացվող կառույցի, ստորաբաժանման կամ խմբի հետ գտնվել է որոշակի իրավահարաբերությունների մեջ կոնֆլիկտի ծագման ընթացքում.
 - վեթինգի ենթարկվող անձի իրավունքները խախտված են և այդ խախտումների դեպքերը լայնորեն լուսաբանված են և հայտնի են հանրությանը: Տվյալ դեպքերում վեթինգի ենթարկվող անձը պետք է ապացուցի խախտումներում ներգրավված չլինելու փաստը,
- **բողոքարկման հնարավորության նախատեսումը,**
- **իշխանությունների տարանջատման սկզբունքի պահպանումը:**

IV. ՎԵԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Ըստ միջազգային փորձի՝ վեթինգ իրականացնող մարմինը պաշտոնատար անձանց վեթինգ իրականացնելիս առաջնորդվում է հետևյալ չափորոշիչներով՝ հաշվի առնելով նաև ստորև թվարկված որոշակի պահանջները:

1. Վեթինգի ենթարկվող անձի անհատական բարեխղճություն.

- Մարդու իրավունքների պահպանում,
- Մասնագիտական վարքագիծ,
- Իր հայտարարագրված և փաստացի տիրապետող եկամուտների ֆինանսական համապատասխանություն,
- Հակաօրինական կազմակերպությունների հետ կապերի բացակայություն:

2. Վեթինգի ենթարկվող անձի անձնական կարողություններ.

- Քաղաքացիություն, նվազագույն տարիքային ցենզ,
- Կրթական չափորոշիչներ,
- Մասնագիտական որակավորում և արհեստավարժություն:
- Անձնական այլ հատկանիշներ:

3. Ներկայացվածություն.

- Գենդերային հավասարություն,
- Էթնիկ պատկանելիություն,
- Կրոնական պատկանելիություն,
- Աշխարհագրական ներկայացվածություն:

4. Ընթացակարգային չափորոշիչներ

- Համապատասխանությունը ստուգման գործընթացին,
- Ձևաթղթերի և դիմումների լրացնելը,
- Պահանջվող փաստաթղթերի ներկայացնելը,
- Սահմանված օրերին և ժամերին ներկայանալը:³

³ “Vetting Public Employees in Post-conflict Settings”, United Nations Development Programme Bureau for Crisis Prevention and Recovery, page 35, available at: https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global-Vetting-Operational-Guidelines-2006-English.pdf?fbclid=IwAR1Zzd_iLq6LhmK5jP7NKNcZTZG5YzveyLuFZ_epcZHm15ITcxifzmeQ_IE.

V. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Ընդհանուր առմամբ, **Ալբանիայի** հաջողված օրինակը կարող է ծառայել որպես հիմնական մոդել, այլ երկրների, այդ թվում Բալկանյան երկրների համար, որով սահմանվել է համակարգային լուծումներ վերթինգի գործընթացի համակարգային վերահսկողության և ղեկավարման համար⁴:

Վերթինգի գործընթացները, որոնք կապված են դատավորների վերագնահատման հետ, իրականացվել են Եվրոպայի նախկին կոմունիստական այլ երկրներում, ինչպես օրինակ՝ **Հունգարիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Լեհաստանում, Չեխիայում, Կոսովոյում, Գերմանիայում, Սերբիայում և Խորվաթիայում**: Այդուհանդերձ, նշյալ գործընթացներից ոչ բոլորի արդյունքում են դատական համակարգում գրանցվել թափանցիկության, հաշվետվողականության և արդունավետության էական փոփոխություններ:

Արգենտինան, Էլ Սալվադորը և Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը ևս պատկանում են այն երկրների թվին, որոնք վերթինգ են իրականացրել:

1. ԱԼԲԱՆԻԱ

a. Նախապատմություն

1990-ական թվականներին Ալբանիայում առկա էին անհրաժեշտ պատմական և քաղաքական նախադրյալներ՝ արդունավետ կերպով անցումային արդարադատություն իրականացնելու համար: 1945-1991թթ. ընթացքում երկրի ղեկավարումը ստանձնած կոմունիստական ուժերը երկրում բռնապետական կարգեր էին հաստատել, որոնց առկայության պարագայում ոչնչացվում էին այլախոհական հայացքներ ունեցող բոլոր անձինք: 1990-1992թթ. Ալբանիայում հակակառավարական լայնամասշտաբ ցույցեր տեղի ունեցան, որոնց ընթացքում բախումներ տեղի ունեցան կառավարական ուժերի և ցուցարարների միջև: Արդյունքում երկրում տեղի ունեցավ իշխանափոխություն:⁵

b. Վերթինգի իրականացման չափորոշիչներ

⁴ “An Analysis of the Vetting Process in Albania”, Bardha Maxhuni, Umberto Cucchi, June 2017, Policy Analysis No. 01/2017, available at: <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>

⁵ Տե՛ս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի 2019 թվականին հրատարակված զեկույցը «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» խորագրով: Չեկույցը հասանելի է՝ <https://armla.am/41375.html>:

«Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին» Ալբանիայի օրենքը (այսուհետ նաև՝ «Վերինգի մասին» Ալբանիայի օրենք) նախատեսում է վերագնահատման գործընթացի իրականացման երեք բաղադրիչներ.⁶

- Ակտիվների ստուգում (asset assessment),
- Կասկածելի կապերի ստուգում (background assessment),
- Գիտելիքների/հմտությունների ստուգում (proficiency assessment):

- **Ակտիվների ստուգում**

Ակտիվների ստուգումը «Վերինգի մասին» Ալբանիայի օրենքով նախատեսված առաջին բաղադրիչն է: Այս բաղադրիչն է, որին առավել շատ դիմադրել են դատավորները և դատախազները, ինչի արդյունքում վերինգի գործընթաց չանցնելու նպատակով կտրուկ մեծացավ այս համակարգերում պաշտոնյաների հրաժարականների թիվը:

Ակտիվների ստուգման բաղադրիչի հիմնական տարրը՝ հայտարարագրերի ներկայացումներից հետո ակտիվների ընդհանուր աուդիտի անցկացումն է, որտեղ գնահատվում է ակտիվների ձեռք բերման աղբյուրների օրինականությունը:

Ստուգումը հնարավորություն կտա գնահատել ակտիվների «հետևում» գտնվող ցանկացած ֆինանսական պարտավորություն և դրանից բխող ցանկացած հնարավոր անձնական հետաքրքրություն՝ գնահատվողի (ստուգվողի) և նրա հետ փոխկապակցված անձի համար:

Բոլոր դատավորներն ու դատախազները պարտավոր են հայտարարագրել իրենց ակտիվները՝ հնարավորություն ընձեռելով համապատասխան մարմիններին կատարել իրենց ակտիվների վերաբերյալ հետաքննություն:

Յուրաքանչյուրը, ում ակտիվները գնահատվում են, պետք է հիմնավորի դրանց ձեռքբերման օրինական աղբյուրները (օրինակ՝ եկամուտները, հարկային հայտարարագրերը):

Ի լրումն ակտիվների հայտարարագրման, գնահատվողը ներկայացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հարկավոր են հիմնավորելու իր հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը և օրինականությունը: Եթե հայտարարագրված ունեցվածքը **երկու անգամ ավելի մեծ**, որքան նրա օրինական եկամուտը, գնահատվողը համարվում է մեղավոր և պաշտոնից ազատվում է, **եթե չկարողանա ապացուցել հակառակը:**⁷

- **Կասկածելի կապերի ստուգում**

⁶ «Դատավորների և դատախազների անցումային վերագնահատման մասին» Ալբանիայի օրենք, Օրենք no.84/2016, հոդված 4, հասանելի է՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVMssmqdgy](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVMssmqdgy)

⁷ Տե՛ս նույն տեղում, Բաժին 4:

Այս չափանիշի վերջնականատակն է հավաստիանալ, որ դատավորները, դատախազները կապված չեն կազմակերպված հանցավոր խմբերի հետ:

Այսպես, կասկածելի կապերի ստուգումը ընդգրկում է ակտիվների հայտարարագրերի և այլ տվյալների ստուգումը, որոնք ուղղված են բացահայտել կազմակերպված հանցագործությունների մեջ ներգրավված անձանց և նրանց կապերը: Եթե ստուգման արդյունքում գնահատվողը մեղավոր է ճանաչվում կազմակերպված հանցագործության մասնակիցների հետ հստակ կապեր ունենալու հիմքով, նա պաշտոնից ազատվում է, եթե չի կարող ապացուցել հակառակը:⁸

• **Գիտելիքների/հմտությունների վերազնահատում**

Գիտելիքների/հմտությունների վերազնահատումները ապահովում են, որ բոլոր սուբյեկտները ենթարկվեն հմտությունների գնահատման: Այսպես, դատավորների դեպքում գնահատվում են նրանց՝ որպես դատավորի հմտությունները, դատախազների դեպքում՝ նրանց նախնական քննություն անցկացնելու կարողությունները:

Գիտելիքների/հմտությունների վերազնահատումը հնարավորություն է տալիս գնահատել նաև գնահատվողի կազմակերպական հմտությունները, էթիկան և անձնական որակները:

Գիտելիքների/հմտությունների վերազնահատումը իրականացվում է օրենքով սահմանված չափանիշների հիման վրա:

Այն անձանց, ովքեր ստացել են «ոչ բավարար» գնահատականը, առաջարկվում է դասընթացներ անցնել Մագիստրանտների դպրոցում: Իսկ նրանք, ովքեր գնահատվել են որպես «անհամապատասխան» որոշակի հմտությունների համար, ազատվում են պաշտոնից:

Ալբանիայի Ազգային անվտանգության մարմինների դերը, որը պատասխանատու է դատավորների և դատախազների ֆոնին գնահատելու համար, 24-ն գտնվում է հակասությունների կենտրոնում, կոպիտ արձագանքելով Դեմոկրատական կուսակցության կողմից, երկրի առաջատար ընդդիմադիր կուսակցությունից:⁹

c. **Վերջինգի իրականացման մեխանիզմ**

«Վերջինգի մասին» Ալբանիայի օրենքով նախատեսված են վերազնահատման գործընթացներն իրականացնող հետևյալ մարմինները

- **Հանձնաժողով,**
- **Գանգատարկման պալատ,** որը վերանայում է Հանձնաժողովի որոշումների բեմ բերված բողոքները, վերջինս ունի **9 տարվա մանդատ** և այդ ընթացքում Ալբանիայի

⁸ Տե՛ս նույն տեղում, Բաժին 5:

⁹ Տե՛ս նույն տեղում, Բաժին 6:

Սահմանադրությանը, «Սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության մասին» օրենքին և արդարադատության համակարգի կառավարման հարցերը կարգավորող օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի որոշելու

- Ալբանիայի Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձր դատական խորհրդի, Բարձր դատախազական խորհրդի անդամների, Գլխավոր դատախազի և Արդարադատության բարձր տեսուչի կողմից թույլ տրված կարգապահական խախտումները,
- բողոքարկելու Ալբանիայի Բարձր դատական խորհրդի, Բարձր դատախազական խորհրդի, ինչպես նաև Արդարադատության բարձր տեսուչի այն որոշումները, որոնցով դատավորների, դատախազների և այլ տեսուչների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր:

- **Հանրային հանձնակատար:**

Գործընթացն իրականացվում է միջազգային դիտորդների հետ համագործակցությամբ:¹⁰

«Վերինգի մասին» Ալբանիայի օրենքով նախատեսված են նաև **Վերագնահատման մարմինների անդամների ընտրության չափանիշները**: Այսպես, **Հանձնաժողովի և Գանգատարկման պալատի անդամ** նշանակվում է Ալբանիայի այն քաղաքացին, ով համապատասխանում է հետևյալ չափանիշներին.

- ավարտել և ստացել է իրավագիտության բակալավրի և մագիստրոսի աստիճան Ալբանիայում կամ արտերկրում, և ստացել է իրավաբանության համարժեք աստիճան, որը համապատասխանում է օրենքով նախատեսված դիպլոմների կանոններին,
- դատավորի, դատախազի, փաստաբանի, իրավաբանական գիտությունների թեկնածուի, բարձրագույն պաշտոն ունեցող քաղաքացիական ծառայողի կամ վարչական կամ իրավունքի այլ ոլորտի աշխատողի ոչ պակաս, քան 15 տարվա աշխատանքային փորձ,
- էթիկայի, բարեխղճության և մասնագիտական հմտությունների բարձր մակարդակ, էթե նա նախկինում ենթակա է եղել գնահատման,
- վերջին 10 տարիների ընթացքում չի զբաղեցրել հանրային կառավարման ոլորտում քաղաքական պաշտոն կամ քաղաքական կուսակցության ղեկավար պաշտոն,
- նրա նկատմամբ չի իրականացվում քրեական հետապնդում, չի դատապարտվել ուղղակի դիտավորությամբ կատարված հանցագործության համար, նրա նկատմամբ չեն կիրառվում այն սահմանափակումները, որոնք նախատեսված են «Ընտրված անձանց բարեխղճության երաշխավորման մասին» օրենքով, ով նշանակվել է կամ կատարում է հանրային գործառույթ,

¹⁰ Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 5:

- օրենքով սահմանված կարգով չի ազատվել նշանակված պաշտոնից՝ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով, կամ Հանձնաժողովի և Գանգատարկման պալատի անդամ դառնալու մասին դիմում ներկայացնելու դրությամբ չունի չհանված կամ չմարված կարգապահական տույժ.
- մինչև 1990 թվականը չի հանդիսացել Ազգային անվտանգության անդամ, համագործակցող կամ արտոնյալ անձ, ինչպես նաև չի հանդիսացել համագործակցող անձ «Ալբանիայի Ժողովրդական սոցիալիստական հանրապետության նախկին անվտանգության ծառայության փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության իրավունքի մասին» թիվ 45/2015 օրենքի իմաստով,
- նախքան առաջադրվելը վերջին երկու տարիներին չի հանդիսացել դատավոր, դատախազ, իրավախորհրդատու կամ իրավական հարցերով օգնական.
- չի հանդիսացել արդարադատության համակարգի բարեփոխումների ժամանակավոր (ad hoc) հանձնաժողովի բարձրաստիճան փորձագիտական հանձնախմբի անդամ, կամ կուսակցությունների և արդարադատության նախարարության կողմից նշանակված փորձագետ.
- առավելագույնը 65 տարեկան է,
- ունի անգլերեն լեզվի լավ իմացություն:

Վերոնշյալ չափանիշների համապատասխանությունը հաշվի են առնվում հետևյալ չափանիշների հիման վրա.

- իրավունքի ոլորտում ակադեմիական գնահատականը,
- թեկնածուի մասնագիտացումը իրավունքի որոշակի ոլորտում,
- զբաղեցրած բարձրագույն պաշտոնը (seniority in the profession),
- կրթությունը և մասնագիտական կրթությունը արտերկրում,
- այն դեպքում, երբ թեկնածուն ստացել է իրավագիտության մագիստրոսի աստիճան Ալբանիայում կամ իրավաբանության համարժեք աստիճան արտերկրում, որը համապատասխանում է օրենքով նախատեսված դիպլոմների կանոններին, նրա միջին որակավորման գնահատականը չպետք է ցածր լինի 8-ից:

Նշված պայմաններն ու չափանիշները կիրառվում են նաև **Հանրային հանձնակատարի** նշանակման դեպքում, բացառությամբ, որը նա պետք է ունենա ոչ պակաս, քան 10 տարվա մասնագիտական փորձ:¹¹

¹¹ Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 6:

«Վերջինգի մասին» Ալբանիայի օրենքի համաձայն **Վերագնահատող մարմինների անդամի պաշտոն զբաղեցնելու հայտերի ներկայացումը և ստուգումն իրականացվում են հետևյալ եղանակով.** Կազմավորվում են հետևյալ հանձնաժողովները.

- **Թեկնածուի ստուգման խորհրդարանական ժամանակավոր (ad-hoc) հանձնաժողովը,**
- **Թեկնածուների ընտրության խորհրդարանական ժամանակավոր (ad-hoc) հանձնաժողովներ:**

Վերջիններիս կազմավորման նպատակով **Ալբանիայի Հանրապետության Նախագահը** անմիջապես ուղարկում է **Մոնիթորինգի միջազգային մարմին** (International Monitoring Operation) **Վերագնահատող երկու մարմինների անդամի պաշտոնի թեկնածուների ցանկերը** և թեկնածուների անհատական փաստաթղթերը, իսկ թեկնածուների ամբողջական ցանկերը հրապարակում է պաշտոնական վեբ կայքում: Այստեղ հարկ է նկատել, որ Ալբանիայում վերջինգի իրականացման համար տեղի են ունեցել սահմանադրական փոփոխություններ՝ Սահմանադրության հավելվածի եղանակով, և նախատեսված է նշյալ հավելվածի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկրի նախագահի կողմից 45 օրվա ընթացքում գործընթացն ավարտելու ժամկետ, հակառակ պարագայում նշյալ լիազորությունը փոխանցում է Օմբուդսմենին: **Մոնիթորինգի միջազգային մարմնի առնվազն երեք ներկայացուցիչներից բաղկացած գնահատող խումբը թեկնածուներին գնահատում է օրենքի համաձայն:** Նախագահի կողմից երկու ցուցակների ներկայացման օրվանից ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում, գնահատող խումբը թեկնածուների որակավորման և ընտրության վերաբերյալ ներկայացում է իր պատճառաբանված (հիմնավոր) առաջարկությունները Նախագահին, որը վերջինիս կողմից փոխանցվում է Ալբանիայի Խորհրդարանին: Եթե Նախագահը 5 օրվա ընթացքում չի կարող կատարել սույն գործառույթը, դրա կատարումը ևս վերապահվում է Օմբուդսմենին:¹²

- **Թեկնածուի ստուգման խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողով**

Ձևական չափանիշներին համապատասխանող թեկնածուների ցանկը, ձևական չափանիշներին չհամապատասխանող թեկնածուների ցանկը և Մոնիթորինգի միջազգային մարմնի առաջարկությունները ստանալուց հետո 3 օրվա ընթացքում **Ալբանիայի Խորհրդարանը ձևավորում է Թեկնածուի ստուգման ժամանակավոր հանձնաժողովը** և «Վերջինգի մասին» Ալբանիայի օրենքի 9-րդ հոդվածի համաձայն հաստատում է դրա կազմը, կանոնակարգը, այդ թվում՝ ընտրությունների անցկացման ընթացակարգը: **Տվյալ հանձնաժողովը բաղկացած է 6 անդամներից, որոնք ներկայացնում են մեծամասնության և ընդդիմադիր կուսակցություններին:**

¹² Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 7:

Թեկնածուների ստուգման գործընթացն իրականացվում է լսումների եղանակով, որի ավարտից հետո նշյալ հանձնաժողովը որոշում է.

- Ձևական չափանիշներին չհամապատասխանող թեկնածուին տեղափոխվել ձևական չափանիշներին համապատասխանող ցուցակ՝ անդամների առնվազն 4 ձայնով,
- Մոնիթորինգի միջազգային մարմնի կողմից ներկայացված ցանկից թեկնածուին տեղափոխվել քվեարկության ենթակա անձանց ցուցակ՝ անդամների առնվազն 5 ձայնով:¹³

• **Թեկնածուների ընտրության խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովներ**

Պաշտոնական չափանիշներին համապատասխանող թեկնածուների ցանկը, պաշտոնական չափանիշներին չհամապատասխանող թեկնածուների ցանկը և Մոնիթորինգի միջազգային մարմնի կողմից առաջադրվող թեկնածուների ցանկը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում, Ալբանիայի Խորհրդարանը ձևավորում է Թեկնածուների ընտրության երկու ժամանակավոր հանձնաժողովները և հաստատում է դրանց կազմը՝

- 12 անդամներ, որից 6-ը առաջադրվել է խորհրդարանի մեծամասնության ուժի կողմից, իսկ 6-ը՝ փոքրամասնության կողմից:
- 6 անդամներ, որից 3-ը առաջադրվել է խորհրդարանի մեծամասնության ուժի կողմից, իսկ 3-ը՝ փոքրամասնության կողմից:¹⁴

Թեկնածուների ընտրության գործընթացը կատարվում է էլեկտրոնային գաղտնի քվեարկության միջոցով: Յուրաքանչյուր անդամ ընտրում և քվեարկում է մեկ թեկնածուի օգտին:

6 հոգիանոց հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացված թեկնածուների ցուցակից ընտրում է Գանգատարկման հանձնաժողովի դատավորին՝ առանց քննարկման, գաղտնի և էլեկտրոնային քվեարկության միջոցով, որտեղ յուրաքանչյուր անդամ ընտրում է քվեարկում է մեկ թեկնածուի օգտին:

12 հոգիանոց հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացված թեկնածուներից ընտրում է հանձնաժողովի անդամի թեկնածու, առանց քննարկման, գաղտնի և էլեկտրոնային քվեարկության միջոցով, որտեղ յուրաքանչյուր անդամ ընտրում է քվեարկում է մեկ թեկնածուի օգտին:

12 հոգիանոց հանձնաժողովի անդամները նաև Հանրային հանձնակատարի պաշտոնի համար թեկնածուների ցանկից քվեարկության համար ընտրում են 2 թեկնածու: Ընտրված է համարվում այն անձը, ով ստացել է ձայների մեծամասնությունը¹⁵:

¹³ Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 8:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 9:

Հանձնաժողովի և Գանգատարկման պալատի նախագահների լիազորությունները հետևյալն են.

- պատրաստում, անցկացնում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը,
- ներկայացնում է Հանձնաժողովը կամ Գանգատարկման պալատը երրորդ անձանց հետ հարաբերություններում,
- ապահովում է մարմնի կառավարումը,
- ընդունում և ստորագրում է Հանձնաժողովի կամ Գանգատարկման պալատի ակտերը, բացառությամբ որոշումների,
- «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքի 14-15-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 4 մասով սահմանված կարգով ղեկավարում է քվեարկությունը:

d. Վենետիկի հանձնաժողովի կարծիքը

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը կարծիք է ներկայացրել «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքի վերաբերյալ¹⁶: Այդ կարծիքում նշվում է, որ Ալբանիայի համար վեթինգի իրականացումը կենսական նշանակություն ունի, քանի որ դատական և դատախազական համակարգերում կոռուպցիայի աստիճանը բավականին բարձր է, ուստի հրատապ և արմատական լուծումներ են անհրաժեշտ:¹⁷ Ավելին, Վենետիկի հանձնաժողովը համանման դիրքորոշումն է արտահայտել նաև ավելի վաղ՝ դատական համակարգին վերաբերող սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ՝ նշելով, որ վեթինգի իրականացումը ոչ միայն արդարացված, այլ նաև անհրաժեշտ էր, որպեսզի Ալբանիան կարողանար ազատագրվել կոռուպցիայի խարանից¹⁸:

Կարծիքում առաջադրվել են հետևյալ հարցերը և տրվել հետևյալ պատասխանները.

- 1. Արդյո՞ք դատավորների կողմից վեթինգի իրականացումը կդիտվի շահերի բախում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր դատավորները, այդ թվում՝ վեթինգ իրականացնողները, պետք է անցնեն վեթինգ:**

¹⁵ Տե՛ս նույն տեղում, Բաժին 2, Հոդված 10:

¹⁶ CDL-AD(2016)036, Amicus Curiae brief for the Constitutional Court on the Law on the Transitional Re-evaluation of Judges and Prosecutors (the Vetting Law) of Albania (adopted by the Venice Commission at its 109th Plenary Session (Venice, 9-10 December 2016), in the future text: Amicus Curiae of Venice Commission, available at: [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4lbg--S3ORY)

¹⁷ Amicus Curiae of Venice Commission, para 8.

¹⁸ CDL-AD(2016) 009, Final Opinion on the Revised Draft Constitutional Amendments on the Judiciary of Albania (adopted by the Venice Commission at its 106th Plenary Session, Venice, 11-12 March 2016), para 52.

Վենետիկի հանձնաժողովի համար առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ վեթինգ իրականացնող դատավորները չհեռացվեն իրենց պաշտոններից այն հիմքով, որ իրենք են հանդիսանալու վեթինգ իրականացնող: Հետևապես, գործընթացը պետք է կազմակերպվի բացառապես սահմանադրությանը համապատասխան՝ պահպանելով դրա սկզբունքները:¹⁹

2. Արդյո՞ք վեթինգային հանձնաժողովի վերաբերյալ օրենքը հարգում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Մասնավորապես, արդյո՞ք դատական իշխանության անկախությունը խախտվում է, երբ դատավորների վերանշանակումը տեղի է ունենում գործադիր իշխանության ենթակայության ներքո գտնվող մարմինների ներգրավվածությամբ:

Մասնավորապես, Ալբանիայում դատավորների և դատախազների վեթինգի իրականացումը վստահվել էր սահմանադրական փոփոխությունների արդյունքում ստեղծված մարմիններին, ինչպիսիք էին Անկախ որակավորման հանձնաժողովը, Գանգատարկման պալատը և Հանրային Հանձնակատարը, որոնք իրականացնում էին իրենց գործառույթները կառավարությանը ենթակա մի շարք մարմինների հետ համագործակցությամբ, այդ թվում՝ Շահերի բախման և ակտիվների հայտարարագրման և աուդիտի բարձրագույն տեսչության (High Inspectorate of the Declaration and Audit of Assets and Conflict of Interest), Փողերի լվացման կանխարգելման գլխավոր տնօրինության (General Directorate for the Prevention of Money Laundering), Դասակարգված տեղեկատվության անվտանգության տնօրինության (Classified Information Security Directorate) և Ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ: Սա կուսակցությունների շրջանում մտահոգությունների տեղիք էր տվել այն տեսանկյունից, որ Ազգային անվտանգության մարմինը գործադիր իշխանության մաս է կազմում, և կառավարության կողմից ենթարկվում է վերահսկողության, հետևապես վեթինգի գործընթացը, որոշակի չափով, վերահսկվում է գործադիրի կողմից:²⁰

Նշյալ հարցի առնչությամբ Վենետիկի հանձնաժողովն այն դիրքորոշումն է արտահայտել, որ եթե վեթինգի գործընթացը ամբողջովին իրականացվի գործադիրի ենթակայության ներքո գտնվող մարմինների կողմից, ապա իշխանությունների բաժանման սկզբունքը կխախտվի, ուստի վեթինգ իրականացնելիս անհրաժեշտ է սահմանափակել գործադիր իշխանության մարմինների միջամտությունը վեթինգի նպատակներին հասնելու համար: Շարունակելով՝ **Վենետիկի հանձնաժողովը փաստել է, որ չնայած այն հանգամանքին, որ գործադիր իշխանության մի շարք մարմիններ ներգրավված են եղել վեթինգի իրականացման գործընթացին,**

¹⁹ Amicus Curiae of Venice Commission, para 17, 61

²⁰ Amicus Curiae of Venice Commission, para 27.

այդուհանդերձ, որոշում ընդունող միակ մարմինը հանդիսանում է Անկախ որակավորման հանձնաժողովը, իսկ գործադիր իշխանության մարմինները միայն խորհրդատվական բնույթ են կրում:²¹ Գործադիր իշխանության մարմինների կողմից ապացույցների հավաքագրումը և դատական կարգով գնահատման ներկայացնելը դատական իշխանության գործունեությանը միջամտություն չի հանդիսանում և համապատասխանում է եվրոպական չափորոշիչներին:²²

3. Արդո՞ք «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքին: Արդո՞ք որակավորման ենթակա դատավորներին ներպետական դատարանների կողմից դատական քննության իրավունքից զրկելը հակասում է կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

Վենետիկի հանձնաժողովի համար առանցքային նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

- Գանգատարկման պալատի անդամները կոչվում են դատավորներ, իրենց գործունեությունն իրականացնում են Բարձրագույն դատարանի ներքո և օգտվում են բոլոր այն օրենսդրական երաշխիքներից, որոնք դատավորների համար են նախատեսված,²³ բացի այդ, վերջիններս վեթինգի իրականացման ավարտից հետո հնարավորություն կստանան աշխատել որպես դատավորներ՝ ալբանական դատարաններում²⁴:
- Ալբանիայի Սահմանադրության Հավելվածի Հոդված F-ով սահմանված նորմերն ապահովում են, որ թե Անկախ որակավորման հանձնաժողովը, թե Գանգատարկման պալատը լինեն անկախ և անաչառ,
- «Վեթինգի մասին» Ալբանիայի օրենքը պարտավորեցնում է, թե՛ Անկախ որակավորման հանձնաժողովին, թե՛ Գանգատարկման պալատին դատավորների և դատախազների համար երաշխավորել արդար դատաքննության իրավունքը,²⁵
- Թե՛ Անկախ որակավորման հանձնաժողովը, թե՛ Գանգատարկման պալատն իրենց գործունեությունն իրականացնում են թափանցիկ, ինչը ենթադրում է, որ նիստերը պետք է լինեն հրապարակային: Բացի այդ, որոշումները պետք է լինեն հիմնավորված, և գրավոր ձևը պետք է պահպանվի:²⁶

²¹ Amicus Curiae of Venice Commission, para 38.

²² Amicus Curiae of Venice Commission, para 36.

²³ Amicus Curiae of Venice Commission, para 39.

²⁴ CDL-AD(2016) 009, Final Opinion on the Revised Draft Constitutional Amendments on the Judiciary of Albania (adopted by the Venice Commission at its 106th Plenary Session, Venice, 11-12 March 2016), para 63.

²⁵ Amicus Curiae of Venice Commission, para 41.

²⁶ Amicus Curiae of Venice Commission, para 42.

Վենետիկի հանձնաժողովն այն համոզմունքն է արտահայտել, որ Գանգատարկման պալատը հանդիսանում է որպես «մասնագիտացված դատարանի մի տեսակ», որը ծառայում է որպես դատական երաշխիք այն անձանց համար, որոնց իրավունքները կարող են խախտվել վեթինգի ընթացքում:²⁷ Ավելին, կարևորվում է, որ այն ստեղծվել է ոչ թե կոնկրետ գործով, այլ՝ մշտական հիմունքներով՝ վեթինգի կիրառման ամբողջ ժամանակահատվածում գործունեություն իրականացնելու նպատակով²⁸:

4. Արդյո՞ք կասկածելի կապերի ստուգման միջոցի հետևանքով չի խախտվի ՄԻԵԴ 8-րդ հոդվածը, որը վերաբերում է անձի մասնավոր կամ ընտանեկան կյանքին:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի, հիշյալ միջոցի կիրառումը տեղի է ունենում հայտարարագրերի ստուգման և համեմատության միջոցով, որը թույլ կտա պարզել դատավորի և դատախազների հետ փոխկապակցված անձանց՝ հավաստիանալու, որ վերջիններս կապված չեն հանցավոր խմբերի հետ: Այս միջոցը հետապնդում է օրինական նպատակ և չի կարող հանդիսանալ ՄԻԵԴ 8-րդ հոդվածով ամրագրված՝ դատավորների և դատախազների անձնական կամ ընտանեկան կյանքին չհիմնավորված միջամտություն:²⁹

2. ԲՈՄՆԻԱ ԵՎ ՀԵՐՑԵԳՈՎԻՆԱ

a) Նախապատմություն

1995թ.-ին Դեյթոնի խաղաղության համաձայնագրով³⁰ վերջ տրվեց ոչ միայն երեքուկես տարի տևած դաժան հարավսլավական պատերազմին, այլև ձևավորեց համալիր ծրագիր՝ ուղղված Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության հաստատմանը:

1998թ.-ից սկսեցին բարեփոխումներ՝ ուղղված օրենքի գերակայության հաստատմանը, միջազգային օրակարգին, դատաիրավական ոլորտի բարելավմանը և անցումային արդարադատության իրականացմանը, որի շրջանակներում որոշվեց դատական համակարգում և պետական կառավարման այլ մարմիններում իրականացնել վեթինգ: Վեթինգի ենթարկելու անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված էր այդ համակարգերում առկա կոռուպցիայի և ոչ կոմպետենտության հանգամանքներով:

Սակայն, նախնական ջանքերը, որոնք ուղղված էին դատավորների և դատախազների համապարփակ վերանայմանը և նրանց՝ ոչ համապատասխանության հիմքով զբաղեցրած

²⁷ Amicus Curiae of Venice Commission, para 39.

²⁸ CDL-AD(2016) 009, Final Opinion on the Revised Draft Constitutional Amendments on the Judiciary of Albania (adopted by the Venice Commission at its 106th Plenary Session, Venice, 11-12 March 2016), para 63.

²⁹ Amicus Curiae of Venice Commission, para 58.

³⁰ Բոսնիայում և Հերցեգովինայում խաղաղության համար շրջանակային ընդհանուր համաձայնագիր, The General Framework Agreement for Peace in Bosnia and Herzegovina, initialled in Dayton on 21 November 1995 and signed in Paris on 14 December 1995 available at: <https://www.osce.org/bih/126173?download=true>

պաշտոնից հեռացնելուն, պսակվեցին անհաջողությամբ: Այնուհետև, 2001թ.-ի սկզբին ստեղծվեց **Անկախ դատական հանձնաժողովը** (ԱԴՀ)՝ որպես դատական բարեփոխումների առաջատար միջազգային կառույց, որը զարգացրեց դատական բարեփոխումների առողջացման ռազմավարությունը, որով առաջարկվեց փոխարինել վերանայման ընթացիկ գործընթացը՝ բոլոր դատավորների և դատախազների վերանշանակման գործընթացով՝ ըստ համապատասխանության: Սակայն, բարեփոխման այս փուլն էլ իրեն չարդարացրեց, քանի որ դատական համակարգը դարձավ շատ «թանկ» և անարդյունավետ, որը չէր ապահովում էթնիկական այնպիսի համաչափ ներկայացվածություն, ինչպիսին որ հասարակության մեջ էր: Այդ պատճառով էլ ԱԴՀ-ն առաջարկեց իրականացնել դատավորների և դատախազների վերանշանակման գործընթացը՝ դատական համակարգի վերակառուցման ծրագիրն իրականացնելուց հետո, որը նպատակ էր հետապնդում կրճատել դատական համակարգի աշխատողների, այդ թվում՝ դատավորների թիվը, ինչպես նաև խթանել էթնիկական ներկայացվածությունը:

Մի շարք փորձագետներ ի սկզբանե խորը վերապահումներ հայտնեցին ընդհանուր վերանշանակման գործընթացին: Հիմնական մտահոգությունը վերաբերում էր դատական պաշտոնների զբաղեցման համար առաջարկվող բաց մրցույթին և այդ պաշտոններից հնարավոր ազատումներին, հատկապես, որ դա տեղի էր ունենում Դեյթոնի խաղաղության համաձայնագրի ստորագրումից վեց տարի անց: Կար կարծիք, որ նման միջոցները կխախտեին դատական համակարգի անկախությունը, մասնավորապես՝ նրանց անփոփոխելիության սկզբունքը, որը նախատեսված է սահմանադրությամբ և օրենսդրությամբ և կծառայեր որպես դատական համակարգում քաղաքական միջամտության բացասական նախադեպ: Ի պատասխան, մի շարք այլ փորձագետներ հայտարարեցին, որ *«դա հենց այն պատճառով էր, որ դատավորը ... անկախ չէ, և մասնագիտական վերանայման գործընթացը ստեղծվել է իրական անկախության հիմքերը ապահովելու համար»*: Ավելին, նրանց համոզմամբ, վերանշանակման գործընթացը ոչ միայն անհրաժեշտ էր, այլև՝ դատական համակարգի վերակառուցման հիմնական գործիքն էր:

Ե) Վերինգի իրականացման մեխանիզմ

Ապակենտրոնացված տեղական իշխանությունների կառուցվածքի վերաբերյալ որոշ մտահոգություններ մեղմելու նպատակով ստեղծվեցին երեք խորհուրդներ՝

- **Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (Պետական խորհուրդ)³¹,**
- **Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (Դաշնային խորհուրդ),**
- **Սըրպսկայի Հանրապետության (Republika Srpska) Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (ՄՀ խորհուրդ):**

Խորհուրդները գործարկվեցին 2002թ.-ի սեպտեմբերի 2-ից: Խորհուրդները անկախ մարմիններ էին, որոնք կարգավորում էին դատական համակարգի հետ կապված կարևորագույն հարցերը, մասնավորապես՝ դատավորների և դատախազների ընտրությունը, նշանակումը, փոխադրումը, կարգապահական հարաբերությունները և ազատումը, նրանց մասնագիտական վերապատրաստման նկատմամբ վերահսկողությունը և բոլոր դատարանների ու դատախազական համակարգի համար բյուջետային առաջարկների նախապատրաստումը: Անցումային ժամանակաշրջանում, որն ավարտվեց 2004 թվականի մայիսի 31-ին, Խորհուրդներին տրվեց լրացուցիչ հանձնարարություն՝ **վերակառուցել բոլոր դատարաններն ու դատախազական ստորաբաժանումները, ներառյալ՝ գրեթե բոլոր դատավորների և դատախազների վերանշանակումը:**

Այս անցումային ժամանակաշրջանում, Խորհուրդները համատեղ ունեին 17 ազգային անդամ, ներառյալ 6-ական անդամ Դաշնային և ՄՀ խորհուրդներից, 5-ը՝ պետական խորհրդից, ինչպես նաև 8 միջազգային անդամ, որոնցից երկուսը հանդիսանում էին նախագահը և փոխնախագահը: Խորհուրդների ազգային անդամները հանդիսանում էին դատական և դատախազական համակարգի տարբեր մակարդակների դատավորներ և դատախազներ, ինչպես նաև փաստաբաններ: **Խորհուրդների քարտուղարության գործառույթներն իրականացվում էր Անկախ դատական հանձնաժողովի (ԱԴՀ)-ի աշխատակազմի կողմից, որը բաղկացած էր 120 աշխատողից:**

Դատարանների վերակառուցումը հիմնված էր համապարփակ գնահատման վրա, որտեղ կիրառվեց երեք հիմնական սկզբունք.

- **դատավորների ծանրաբեռնվածությունը,**
- **բնակչության քանակը, որոնց սպասարկում են դատարանները,**
- **դատարանի հեռավորությունը հաջորդ՝ առավել մեծ դատարանից:**

³¹ Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհրդի (պետական խորհուրդ) և Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհրդի (դաշնային խորհուրդ) մասին օրենքները, հասանելի են՝ https://pravosudje.ba/vstv/faces/pdfservlet.jsessionid=2ed1a30eff3ec5ef6041422200cb73c2728cfa2aa8cf9cafc6b186765c3c7a28.e34TbxyRbNiRb40Qb34MahePaxn0?p_id_doc=14047, <http://rai-see.org/wp-content/uploads/2015/08/LAW-ON-HIGH-JUDICIAL-AND-PROSECUTORIAL-COUNCIL-OF-BH.pdf>

Անհրաժեշտ դատավորների և դատախազների քանակը հաշվարկվեց դատական գործերի ներհոսքի հիման վրա: Այն պահից, երբ դատարանների և դատախազական ստորաբաժանումների, ինչպես նաև յուրաքանչյուր դատարանի և դատախազության ստորաբաժանման համար դատավորների և դատախազների թիվը որոշվեց, խորհուրդները նախաձեռնեցին վերանշանակման գործընթացը: Վերանշանակման գործընթացում հայտարարվեց դատական և դատախազական համակարգում թափուր տեղերը համալրելու մասին բաց մրցույթ, որին կարող էին դիմել այն բոլոր որակավորված մասնագետները, այդ թվում՝ համակարգից դուրս գտնվող թեկնածուները (external candidates), ովքեր համապատասխանում էին պահանջներին: Պաշտոնավարող դատավորները և դատախազները նույնպես իրավունք ունեին դիմել՝ հավակնելու իրենց կամ այլ պաշտոնի: Վերանշանակման գործընթացը տեղի է ունեցել մի քանի փուլերով, և յուրաքանչյուր փուլում ներգրավվել են սահմանափակ թվով դատարաններ և դատախազական ստորաբաժանումներ:

Վերանշանակման գործընթացում ԱԴՀ-ն ստուգում էր ստացված դիմումների համապատասխանությունը ընդհանուր կանոններին, ներառյալ՝ սեփականության ձեռքբերման համապատասխանությունը օրենքին, քաղաքական պատկանելիությունը և ունեցած ակտիվները: Դիմումներում ներառվում էին նաև տեղեկություններ, որոնք վերաբերում էին ռազմական ծառայությանը, զբաղեցրած հանրային պաշտոններին և իրավական գործընթացներին, որոնք տեղի են ունեցել կոնֆլիկտային տարիներին: ԱԴՀ-ն տրամադրում էր դիմումատուների անունները տարբեր միջազգային կազմակերպությունների՝ նրանցից մեկնաբանություններ, բողոքներ, գնահատականներ ստանալու համար: Ստացվում էին նաև հակամարտության հետ կապված տեղեկություններ, սակայն դրանք բավարար չէին, և դրանց տրամադրման և ձեռքբերման գործընթացը կադում էր, ինչի արդյունքում հնարավոր չէր ապահովել անկախ քննություն: Վերանշանակման գործընթացի ժամանակ վեթինգ իրականացնող մարմնի վրա էր դրված ապացուցման բեռը, որ թեկնածուն չի համապատասխանում տվյալ պաշտոնին:

Վերանշանակումները տեղի էին ունենում՝ հիմք ընդունելով թեկնածուի պրոֆեսիոնալ համապատասխանությունը և պահպանելով գենդերային և ազգային համամասնական ներկայացվածության սկզբունքը:

Բացի այդ, գործում էր բողոքների ստացման մեխանիզմ՝ դատարանների և դատախազների դեմ: Բողոքները քննության էին առնվում Կարգապահական հացերով դատախազության գրասենյակի կողմից, որը, բավարար հիմքերի առկայության դեպքում, գործը փոխանցում էր ԱԴՀ: Այդ բողոքները, սակայն, հիմնականում պարունակել են ընդհանուր դժգոհություններ դատական որոշումներից, սակայն չեն ներառել որևէ առարկայական մեղադրանք:

Ընդհանուր առմամբ, վերանշանակման գործընթացն ունեցել է «փափուկ» ազդեցություն և ուղեկցվել է բարդություններով, որոնք հիմնականում պայմանավորված են եղել արդյունավետության և թափանցիկության ցածր մակարդակով, կոմպետենտ կադրերի պակասով, որն իր ցայտուն դրսևորումն էր ստանում, հատկապես, ազգային փոքրամասնություն հանդիսացող դատավորների շրջանում և դատավորների և դատախազների բարեխղճության, տեխնիկական հմտությունների, որակավորումների, գույքային և ֆինանսական կարգավիճակի գնահատման հստակ չափորոշիչների բացակայությամբ:

Մյուս կողմից, վեթինգի արդյունում մեծացել է դատական համակարգի թափանցիկությունն ու հաշտվողականությունը, և մասնակիորեն վերականգնվել է դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը՝ 41-68 տոկոսով: Նշյալը պայմանավորում են նաև այն հանգամանքով, որ վերանշանակման գործընթացն ամբողջովին իրականացվել է միջազգային հանրության վերահսկողության ներքո:

Թեև վերանշանակման գործընթացի ավարտից հետո միջազգային փորձագետները հեռացան Բոսնիայից, սակայն ԱԴՀ-ն դարձավ մշտական հիմունքներով գործունեություն ծավալող մարմին, որը հետագա տարիների ընթացքում զբաղվում էր դատավորների ընտրությամբ, նշանակմամբ, վերանշանակմամբ, պաշտոնանկությամբ, կարգապահական, վերապատրաստումների և էթիկայի հարցերով:

c) Վիճակագրություն

Դատական համակարգի վերակառուցման և վերանշանակումների արդյունքում.

- **առաջին ատյանի դատարանների ավելի քան 30 տոկոսը փակվեց,**
- **դատավորների թիվը գրեթե 30 տոկոսով կրճատվեց,**
- 953 պաշտոնի համար ստացվել էր շուրջ 5000 հայտ 2000 դիմորդից, քանի որ դիմորդներից շատերը դիմել էին մեկից ավելի պաշտոնի համար:
- **վերանշանակման համար դիմում ներկայացրած գործող դատավորների և դատախազների գրեթե 30%-ը չվերանշանակվեց:** Նշյալի պատճառներն կենսաթոշակային տարիքի լրացումը կամ վերանշանակման գործընթաց անցնել չջանկանալը:³²

Առավել մանրամասն՝

Դատական համակարգի փոփոխությունների ամփոփումը, առաջին ատյանի դատարան.

ԿԱՌՈՒՅՑԸ	ՆԱԽԿԻՆՈՒՄ	ԱՌԱՋԱԴՐՎԱԾԸ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
-----------------	------------------	--------------------	----------------------

³² “Vetting Public Employees in Post-conflict Settings”, United Nations Development Programme Bureau for Crisis Prevention and Recovery, pages 37-41, available at: https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global-Vetting-Operational-Guidelines-2006-English.pdf?fbclid=IwAR1Zzd_iLq6LhmK5jP7NKNcZTZG5YzveyLuFZ_epcZHM15ITcxifzmeQ_IE

ՄՀ խորհուրդ	25	21	- 16 %
Դաշնային խորհուրդ	53	31	- 42 %
Ընդհանուր	78	52	- 33%

Բարձր Դատական և Դատախազական խորհրդի կողմից որոշված դատավորների և դատախազների պաշտոնների թիվը.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ	ՆԱԽԿԻՆՈՒՄ	ՆՈՐ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՄՀ շրջանի դատարանի դատավորներ	56	61	+ 9%
ՄՀ հիմնական դատարանի դատավորներ	227	144	- 37%
Քենթոնրլի (Cantonal) Դաշնային դատարանի դատավորներ	158	120	- 24%
Դաշնային մունիցիպալ դատարանի դատավորներ	439	304	- 31%
Ընդհանուր	880	629	- 29%
ԴԱՏԱԽԱԶՆԵՐ	ՆԱԽԿԻՆՈՒՄ	ՆՈՐ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՄՀ շրջանի դատախազներ	70	73	+ 4%
Քենթոնրլի (Cantonal) Դաշնային դատախազներ	177	172	- 3%
Ընդամենը	247	245	- 1%

3. ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարիայի Հանրապետությունում վեթինգն օրվա հրամայական հանդիսացավ կոմունիստական ռեժիմի տապալումից հետո: Հունգարիայում վեթինգն իրականացվում էր 3 հանձնաժողովների կողմից, որոնք բաղկացած էին 3-ական դատավորներից, որոնք նշանակվում էին Ազգային անվտանգության ծառայության կողմից՝ Վճռաբեկ դատարանի նախագահի համաձայնությամբ: 7,872 քաղաքացիական ծառայողներ, դատավորներ, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ հեռացվեցին իրենց պաշտոններից արտասահմանյան երկրների գործակալներ հանդիսանալու կամ այդպիսի գործակալների հետ առնչություն ունենալու մեղադրանքներով:³³

³³ “Vetting Public Employees in Post-conflict Settings”, United Nations Development Programme Bureau for Crisis Prevention and Recovery, pages 63-67, available at: https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global-Vetting-Operational-Guidelines-2006-English.pdf?fbclid=IwAR1Zzd_iLq6LhmK5jP7NKNcZTZG5YzveyLuFZ_epcZHM15ITcxifzmeQ_IE

4. ԿՈՍՈՎՈ

Կոսովոյում դատավորների և դատախազների վերագնահատումը իրականացվել է ԵՄ հասարակության հետ կապերի գրասենյակի (EU Commission Liaison Office) վերահսկողության ներքո՝ նպատակ ունենալով ստեղծել անկախ և մասնագիտական դատական և դատախազական համակարգ:

Վեթինգի գործընթացի ներքո 898 դատավորներ և դատախազներ վերագնահատման գործընթացի մաս դարձան, որից դատավորների և դատախազների միայն 50 տոկոսը հաջողությամբ անցան էթիկայի և մասնագիտական թեսթը, ինչի արդյունքում վերանշանակվեցին որպես դատավոր և դատախազ:

Ընդհանուր առմամբ, Կոսովոյում վեթինգի գործընթացի վերաբերյալ գնահատականները դրական էին:

Այդուհանդերձ, մինչ օրս կոռուպցիայի բարձր մակարդակը, դատական համակարգի արդյունավետության և անկախության բացակայությունը վկայում են այն մասին, որ գործընթացը չունեցավ երկարատև ազդեցություն Կոսովոյի դատական համակարգում:³⁴

5. ՍԵՐԲԻԱ

Սերբիայի Հանրապետությունը վեթինգի գործընթացով չի հանդիսանում ռեզիոնալ մակարդակում հիմնական մոդել: Կառավարությունը ձախողեց համապարփակ վեթինգային գործընթացի ձևավորումը և համակարգային վերակառուցումը, թեպետ վեթինգի իրականացման համար հիմնական օրենսդրական պայմանները և սկզբունքները նախանշվել էին: Քաղաքական կամքի ակնհայտ բացակայությունը հանդիսացավ վեթինգի գործընթացի ձախողման հիմնական պատճառներից մեկը:³⁵

6. ԽՈՐՎԱԹԻԱ

³⁴ “An Analysis of the Vetting Process in Albania”, Bardha Maxhuni, Umberto Cucchi, June 2017, Policy Analysis No. 01/2017, page 3, available at: <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>

³⁵ “Vetting as an element of institutional reform and transitional justice”, Institute of Criminological and Sociological Research, Maja Kovac, Belgrade, 2007, available at: http://www.academia.edu/2565556/Vetting_as_an_Element_of_Institutional_Reform_and_Transitional_Justice

Խորվաթիայում վեթինգի գործընթացը նույնպես ձախողվել է: Մշակվել էր երկու օրենսդրական նախագծեր, որոնք կապված էին կոմունիստական դարաշրջանում կատարված չարաշահումների հետ: Երկու նախագծերից որևէ մեկը չընդունվեց:³⁶

³⁶Տե՛ս նույն տեղում:

VI. ԴԱՏԱԿԱՆ ՎԵԹԹԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհրաժեշտ քայլերը

- Սիներգիաների ապահովում դատաիրավական, մարդու իրավունքների և հակակոռուպցիոն ռազմավարությունների միջև,
- Դատավորի գործունեության դադարեցման հիմքերի վերանայում,
- Դատավորի գործունեության դադարեցման մասին որոշում իրականացնող մարմնի վերանայում և գործառույթների նախատեսում,
- Վեթինգ իրականացնող անձանց չափանիշների սահմանում,
- Կոլեգիալ/ինքնավար կամ անկախ մարմնի ստեղծում, որը պատասխանատու կլինի վեթինգի ենթարկվող անձի լսված լինելու իրավունքի երաշխավորման, տվյալների արժանահավատության ստուգման համար, ինչպես նաև նախատեսված կլինի այդ մարմնի որոշումների բողոքարկման մեխանիզմներ,
- Դատավորների կողմից պաշտոնավարում՝ մինչև վեթինգի իրականացումը և դատավորների վերանշանակումը:

Ռիսկերը

- Գործընթացի քաղաքականացումը, անաչառության և օբյեկտիվության սկզբունքները չպահպանելը, իշխանական և ընդդիմադիր ուժերից համամասնական մասնակցություն չապահովելը,
- Դատավորի անփոխարինելիության սկզբունքը չպահպանելը,
- Վեթինգ իրականացնող մարմնի և դրա անդամների ստեղծման հստակ չափանիշների բացակայությունը կամ այնպիսի չափանիշների սահմանում, որոնք իրատեսական չեն,
- Իշխանությունների տարանջատման սկզբունքը չպահպանելը,
- Դատավորների նշանակման կարգը և Արդարադատության ակադեմիայում ուսանելու ձևաչափը:

Քննարկման ենթակա հարցերը

- Արդյո՞ք կիրառվելու է միայն դատական վեթինգ, թե՛ այլ մեխանիզմներ,
- Արդյո՞ք վեթինգը կիրառվելու է որպես մեկանգամյա գործողություն, թե՛ կանոնավոր կերպով իրականացվող մեխանիզմ,
- Արդյո՞ք վեթինգը տարածվելու է միայն դատավորների նկատմամբ, թե՛ նաև դատական իշխանության այլ ներկայացուցիչների նկատմամբ,

- Արդյո՞ք վեթինգը ընդգրկելու է միայն դատական համակարգը, թե՛ նաև այլ իրավապահ համակարգեր,
- Եթե վեթինգը ընդգրկելու է նաև այլ մարմիններ, ապա որո՞նք են դրանք և ի՞նչ հերթականությամբ են ենթարկվելու վեթինգի,
- Ո՞ր մոդելն է ՀՀ-ն որդեգրելու վեթինգի մարմինը ձևավորելիս,
- Եթե վեթինգը ընդգրկելու է նաև այլ մարմիններ, արդյո՞ք գործելու է մեկ վեթինգի օրենք, որը կտարածվի բոլորի նկատմամբ, թե՛ մի քանի օրենքներ,
- Արդյո՞ք առկա է սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն,
- Որո՞նք են վեթինգային չափանիշները,
- Արդյո՞ք վեթինգային չափանիշները նույնն են լինելու բոլորի նկատմամբ, թե՛ տարբեր,
- Ինչպե՞ս սկսել՝ հայեցակարգի մշակումից, թե՛ օրենքի կամ մոդելի մշակումից,
- Ինչպե՞ս ստեղծել համերաշխության մթնոլորտ,
- Ինչպիսի՞ն պետք է լինեն վեթինգային գործընթացը՝ բաց, թե՛ փակ: